*Հավելված 7*
*<u><<ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-15/4>></u> ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*

«____________________» ՍՊԸ-ի տնօրեն

պարոն _________________________

<<ՆՏԻ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Երևանի «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և մասնակիցների միջև կնքված ՇՀԱՊՁԲ-11/4 շրջանակային համաձայնագրով նախատեսված առողջապահական և լաբորատոր նյութերը: Ապրանքների մատակարարման պայմաններն նշված են կից հավելվածներում և պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել՝ ք.Երևան, Ա.Արմենակյան 197Ա հասցեով, Ն.Կեսոյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 25-ը, ժամը $10^{30}$-ը:

Հայտերը կբացվեն ք.Երևան, Ա.Արմենակյան197Ա հասցեում, 2014թ. դեկտեմբերի 25-ին, ժամը $10^{30}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՏՆՕՐԵՆ Ա.Բ.ՄԵԼՔՈՆՅԱՆ